

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տես յ'էջ 397)

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՀԵՂԻԿԱ



ՍՍ հեռուոր աշխարհին մէջ պա-
թուաւոր քաղաքական գրիւք և
ընչիւք ազգային գաղթականութիւն
մը կար դարերէ ի վեր, փոխադրեալք
ի մայր հայրենեաց և ի Զուգայէ. ժա-
մանակին հանգամանօրը տարագիր, այլ ա-
ռանց մոռնալու զայն. սիրելով միշտ զազգը
և զլեզուն և Նախնիժաց յօղուածով տեսնը
արդէն թէ որպիսի բարերար մը եղաւ Զա-
քիկեան ի հաստատութիւն և ի յառաջադիմու-
թիւն Էջմիածնի տպարանին. նաեւ յայլուստ
գիտնք թէ առատաժիտ նուիրատուութիւնք
եղած են յայլոց զանազան վարժարանաց և
աւսումնարանաց կառուցման, նորանոր և օգ-
տակար մատենից հրատարակութեան ինչուան
մեր օրերը:

Բայց առանձին տպարանի կառուցման յի-
շատակ իրենց քով՝ ճիշտ այն թուականին
կը հանդիպինք, յորում Սիմէոն կաթողի-
կոս տպարանն կը հաստատէր յ'Էջմիածին,
այսինքն 1777ին Հնդկաստանի Մաղղաս
քաղաքին մէջ, Շահմիրեան՝ կամ ինչպէս
այլք կը կոչեն, Շամիրամեան կոչուած ազ-
գայնոյ մը ձեռքը:

Վաճառական մ'էր նա, և հաւանականա-
բար առևտրոյ պատճառաւ փոխադրեալ ի
Հնդկաստան: Հայրենեաց սէրը վառ կը պա-
հէր և կը տածէր սրտին մէջ. անոր հետե-
ւանք՝ նաև այնպիսի խորհուրդք, բաղձանք

և մտածութիւնք, որ լրջարար գործողի մը
համար գէթ տարածամ կրնային համարուիլ,
և գործադրութիւնն ոչ այնչափ գիւրդին: Մի-
անգամայն լաւ հասկըցած ըլլալով՝ թէ ազ-
գային կենաց բարոյքման անհրաժեշտ պայ-
ման մ'ալ ուսումն է, ետևէ եղաւ զայն ծա-
ւալելու աշխատիլ զորոց տպագրութեամբ:

Այս նպատակին հասնելու համար որոշեց
տպարան մը բանալ ի Մաղղաս, ուր յամի
1772 Նոյ տետրակ կոչուած զբքոյկ մը հրա-
տարակեց յորում կ'ընթեռնունք հետևեալ յի-
շատակարանն. « Նոյ տետրակ որ կոչի Յոր-
գորակ, շարագրեցեալ սակս սթափելոյ երթ-
տասարկութեան, և մանկանցն հայկազանց և
ի հեռացեալ թմրութեանէ քնոյ ծուլութեան:
Եւ խանդաղատական տարփանօք տպագրեցեալ
շահիւքն և ծախիւք Յակոբայ Շամիրեան կոչե-
ցելոյ. աշխատութեամբ Մոսկիսի Բաղրամեան
հրահանգին իւրոյն, ի յօգուտ թարմառասակ
և նորափթիթ մանկանցն Հայոց... Յամի
մարդեղութեան Բանին 1772. և ի թուին
Հայոց 1224, ի Հոգիկս, ի քաղաքն Մա-
ղղաս, ի տպարանի նոյնոյ Յակոբայ Շամի-
րեան կոչեցելոյ »:

Հետևեալ տարւոյն կը հրատարակուի Ո-
րոգայք փառաց. « Գիրք անուանեալ Ո-
րոգայթ փառաց, վասն կայնաւորելոյ ամե-
նայն գործ անկարգութեան: Երազրեցեալ
Եակոբայ Շահմիրեանց Նոր Զուգայեցւոյ

առ ի յօգուտ ազգին Հայոց... ի Թագաւորութեան յոգոստոփայլ տեսնան երկրորդի Հերակլիոսի ի Թիպլիս: Յամի Տեսան և Փրկչին մերոյ Յ. Քրիստոսի 1773. և ի Թուին Թուականութեան Հայոց 1222 ի Հնդկ ի մայրաքաղաքն Մատրաս: ի տը պարանի նոյն Յակոբայ Շահամիրեանց » : Գրքին ճակատէն անմիջապէս ետքը հետեւեալ ծանօթութիւնն դրուած է. « Սխալանք բուր գրքին տառի և բառի ընթերցողք ի ձայնէ բառից ճանաչի, ի պատճառն անծանօթութեան արհեստին շարադրողիս, զի ոչ գիտաց զանազանութիւն տառից այսինքն՝ դ, թ, ծ, ձ, հ, յ, վ, տ, ց, ռ. սոքա գտնիս մին ի տեղի միւսի, զու ինքնդ ի միտս քո փոխարկէ որն որ արժան է » : Թ'էջն 105 սկիզբէն է երկրորդ հատորին զոր ինքն կը կոչէ « Նշանակ կամ կարգադրութիւն Հայոց վասն կառավարութեան Հայաստանեայց յԱշխարհի » : ի սկիզբն գրոցս. « Էս ստորագրոցս՝ որ եմ ի փորձկանց Հայոց, և խոնարհ սպասաւորն ձեր, խոստովանիմ առաջի Աստուծոյ և մարդկան, որ ոչ ունիմ ցանկութիւն ըստ անձի՝ ոչ իշխանութեան և ոչ հարստութեան և փառաց. բայց միայն կատարեալ սիրով կապակցեալ կամ ընդ ռեպական ազգն իմ և աշխարհս մեր. այլ տարբերութիւն ժամանակին ձգեաց զմեզ ի տարբ աշխարհ. որում զսի զիս ի ներքոյ կառավարութեան այլ ազգաց քրիստոնէից ազատաց... Էս ի երկու պատճառէ չկամէի յիշեցուցանել անուն շարադրողիս. նախ զի ազէտը մի հայդայեցեն, և երկրորդ՝ զի իմաստունը մի փառաբանեացեն. այլ ի պատճառն որ ոչ կարէ լինել ոչ ինչ շարադրութիւնք մինչ չիցէ մէն շարադրող. վասն այն մտածութեան շարադրողն սորա յարկիւ բացատրեցի որպէս յրկզբնադրութիւնն մի ի փորձկանց որդւոց Հայոց ի յազգէն Թորս. զոմայ և ի տանէն Նախիջևանոյ ի 4280000 աստիճան յուսուսային կողմ յաշխարհէ ի յոտս ծայրագոյն լերին Մասիս. և այժմոյս եղեւ ի արին Ուլիխանոս Էօրմիստեղի զրանն մայրաքաղաքի Մագրասու, յամի Տեսան Փրկչին մերոյ Քրիստոսի 1773 » : Եւ Յիշատակարանին մէջ այլ այսպիսի տեղեկութեան

մը կը հանդիպինք. « Որպէս շարադրող գրքիս վաճառական անծանօթ ի արհեստին շարադրութենէ և բոլորովին աղքատ... ոչ կարաց լուս ածել աւելի քան զայս... զի հեղինակ գրուս ոչ եղիտ յօանականութիւն յուրեք. բայց հաւատարիմ սպասաւորաց տան հօր իւրոյ, եթէ շարեւն տառից, եթէ անլատելն եթէ լոկելն և եթէ տպելն. որ սոքա էին ի յազգէ Սիամ, որում ունին ի ծննդենէ լեզուս բարբառս յազգին իւրեանց. որովհետեւ ի յայլ ազգէ և յայլ լեզուէ կարէ լուս ածել այսքան. ուրեմն ոչ է արժան զի մէջ մեր ոչ որ ասիցէ թէ բանս մեզանէ իրեւ անկարելի... վասն որոյ արժանի համարեցի յիշատակել ջանասէր աշխատողս իմ և օգնական բանիս այսմիկ. այսինքն Չերհան որդւոյ Սրոնեան և Չաքուս որդւոյ Մարկոսեան, երկրքեան ծնեալ ի յաշխարհն Սիամ. և ի տարբերութենէ ժամանակի պատճառաց հասեալ առ մեզ ի հասակի մանկութեան իւրեանց ի մէջ մեր զարգացեալ, սնեալ և սիրով յանձն տուեալ մկրտութիւն սուրբ ի յանուն ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ըստ օրինօք առ մուսնացեալ ընդ աղաթինս հօր իմոյ, եղեալ հայր որդւոց և զստեբաց և հաւատարիմ տեսան իւրեանց : Վասն որոյ աղաչեմ առ բոլոր ազգն Հայոց, կամ որ որ տարբ աշխարհ ի մէջ ազգին Հայոց, սիրով սոցա ունիցիք ըստ արժանեաց աշխատանաց՝ որպէս իրեւ երախտագէտ. քան զի ի դրացեաց սոցա այժմոյս ևս գտանի ի Հայաստան աշխարհ, որում ցեղաբանութիւնն կոչի Մամիկոնացիք » : Էր ծանուցանէ զարձեալ թէ՛ « ի ամանէ տպեցան ծախիւք մերօր մին հարիւր և տասն հատ. տասն ի ամանէ մնալոյ վարձ ծախուց մերոց. մնացեալ մին հարիւր հասն, եթէ իշխանք, եթէ հասարակ անձինք. ո՛վ որ որ զացի, ուրախ վայելումն լինի վասն իւր. այլ զինն նորա՝ իւրաքանչիւր մի գրքի տասն օսկի, որում համապատասխանի քառասուն ռուբլի հատուցանի տընանկաց և աղքատաց. վասն սիրոյ և փրկութեան ազգին Հայոց ի լծորդութենէ բարբառաց. այս հատուցումն ոչ հարկադրեմ, եթէ ոչ ազապանօք ինդրեմ » :

1783ին օոյն Շահմիրեան Յակոբայ տը պարանէն հրատարակուած կը գտնենք Դաւ- մագի պատմութեան գիրք՝ որ է « պատմա- գրութիւն վարուցն և զործոց Նատրշահ Թա- զաւորին պարսից. հանեալ ի գրոցն պատ- մութեան ազգին պարսից. արարելոյ յումեմնէ անգլիացոյ մտոր Հանսոնէ կոչեցելոյ » ։ յանգրիականէ ի հայ վերածուած է ի Միր- զայեան Պօղոսէ Ամգեցոյ « մի ի յանպի- տան աշակերտացն » — ինչպէս ի ճակատուն կը նշանակուի, — ի Քրիստոս հանգուցեալ Եղիա աստուածիմաստ վարդապետին, որ էր մի ի յընտիր միաբանից վանացն Ամենա- փրկչի ի Զուղա » ։ Ի վերջաբանին ալ կ'ը- սուի. « Եւ զգրուիս այս նորոգ լոյս ածեալ, տպեցաւ երկու հարիւր հատ. ի պատիւ հա- սարակ ազգին Հայոց... Յամի Տեառն Փրկի- չին մերոյ Քրիստոսի 1783 » ։

Այսչափ է, գէթ մեր գիտցածը, նկատ- մամբ Շահմիրեանի տպագրական գործին ։

Միայն մեր վանական յիշատակարանները կ'ըսեն թէ ծանր պարտքի օտակ ընկած ըլ- լայ « ընդ ծանր պարտեօք հնծէ, կը գրէ մեր միաբաններէն մէկը ի Մատթաէ 1819, երևելի առնն Շահմիրեանց յետ ի վաճառ տալոյ զստացուածս իւր անթիւս » ։

Իրմէ վերջը կը գտնենք՝ զՅովհան քա- հանայ Շիրազեցի Շմաւոնեան, որ Մա- տրաս քաղաքին մէջ 1789ին տպարան մը բանալով՝ նոյն թուականին կը տպագրէ Մա- րիանէ կոռնիկ վկայարանութիւնը, յառա- չագոյն Հայոց 1215ին ի կոստանդնուպոլիս եղած տպագրի մը վրայէն, « Եւ այժմ տը պապրեցեալ, — կ'ըսէ ճակատուն խորագի- րը, — ի Հնդկիս ի մայրաքաղաքս Մա- զրաս՝ տառիւ յօրինեցեալ ի ձեռագործէ Յա- րութիւն քահանայի որդոյ Շմաւոն Շիրա- ղեցոյ » ։ Աւելի պարզաբար. « ... տպագրե- ցաւ զգրուիս այս երկու հարիւր հատս՝ առ ի պատիւ սերտ մտերմին իմոյ աշնուազուն ազա Մարութ Յովսէփ փռնաշեանց... » ։ Եւ ոք վա- յելէք զգաղթածաշակ գրչոյկս այս, յիշեցէք՝ որդի վշտաց և զոյս զրոցս որ յօրինեցաւ ձե- ոսմբ իմով, ամենայն պարագայս թէ տա- ուաշինութիւնն և թէ շարունկ կապարից. ծա- խիւք և վաստակօք իմոյ՝ Յարութիւն Շմա-

ւոն, շնորհքն Աստուծոյ քահանայ Շիրա- ղեցի... Մատրասումս ։ Եւ յաւարի 30, յամի Տեառն 1790 » ։ — 1792ին ալ Յիսուս Որդի Շնորհալոյն տպագրուած է նոյն տը- պարանին մէջ, բայց ուրիշ ձեւերով և տը- ղեամբք, ինչպէս կ'անկարկուի յոտանաւոր յիշատակարանին.

« Աւր քաջատեմք վասն Կարկին

Սակս որոյ գիրքս ընծային,
Ձի ի նահանգս Հնդկայի
Յոյժ ցանկացոյց զբոց սոցին,
Քանդի Կալիս զբառնէին,
Եւ քահանայք փափակէին.
Ներկայացեալ ու զբառնէին
Ձիդնս յինքեան պարփակէին,
Ձորոյ կալուք զփոյթ անին
Յաւանս առնել զտարփային.
Գործակցութեամբ բարեղաշին
Աստուածաւոր և երջանկին
Պարոն Աւետ Սնթեան Կալին
Բուռն հարեալ արեւմաբ սորին
Տըպեցոցաց զըզմամբ սըրտին
Տնթառս Որդի գիրքս Կարկին...
Եւ Գրեգորի բանաստեղծին
Փիլիպոսի բարեշնորհին,
Եղիազարու քաջազորոսին
Նորադրուել Յօնանիսին...
Պատշաճ վարկաւ ևս յիշման
Որոց անուանին են իսկ տրման
Որք կանխու են մեր օգնական
Բարեպաշտն և ժալան
Ջալարոն Մարուկ Յակոբյանեան
Նաև Նախնեաց շնորհմբ համաց
Արման լիցին երանութեան... » ։

Եւ յիսուս Որդի գրքէն յառաջ տպագրուած է ի գործարանի Շիրազեցոյն տեսրակ մ'ալ Որդ չալաստանեաց կոչեցեալ, որ ունի մակագիր « Տեսրակ սր կոչի Որդ չալաս- տանեաց. շարագրեցեալ ի Թաղեոս քահա- նայէ որդոյ Տէր Անդրէասի Նոր Զուգայեց- ալ Սօգրինեանց կոչեցելոյ » — ի վայելումն ման- կանց եկեղեցոյ, ի հայրապետութեան Տեառն Ղուկասոս ամենայն Հայոց կաթողիկոսի ի վաղարշապատ, Եւ ի Յաւաշնորհութեան Նոր Զուգայու Տեառն Յակոբայ արքեպիսկոպոսի ։ Եւ ի Թաղաւորութեան Օգոստոսփայլ տեառն երկրորդի Հերակլայ արքայի, Թամի Մար- ղեղութեան փրկչին 1791, և ի Թուական նութեան Հայոց 1240, ի Հնդկիս մայրա-

քաղաքն Մադրաս : Ի տպարանի Տէր Յա-
րութիւնի Շմաւոնեան Շիրազեցոյ » :

*
* *

Ինչպէս Շամիրի, այսպէս նաև Շիրազե-
ցոյ տպագրութիւնը խիստ անարուեստք էին,
որովհետև ինչպէս իրենք ալ անկեղծաբար կը
խոստովանին, իրենք էին տառից հարքն ու
մարբը փորագրող, ձուլող, շարող և տպա-
գրող. հարկաւ ասելի կատարելութիւն չէր
կրնար պահանջուիլ այդպիսի դժուարութեամբ
գործողներէ : Բայց ինչպէս նախնեաց գրոց,
և հետեւեալին մէջ ալ պիտի տեսնենք որ
յաջողեցաւ Շիրազեցին իրեն բարերար սա-
տարիչը ալ գտնել, և այդպէս փոքր ինչ ա-
ւելի բարեշնորհ ընել տպագրութիւնքն :

1793ին Պորփիրի Ներածոյքիսն, Դաւ-
թի Անյաղթի թարգմանութեամբ, կը հրատա-
րակուէր Շիրազեցոյն տպարանէն, յորում
հրատարակողն ուրախութեամբ կ'ըսէր ի յի-
շատակարանին թէ՝ « Հոգին սուրբ... լցոյց
զտարփումն օրտի իմոյ, զի միանգամ ի սկզբ-
բանէ ի հնումն բացատրեցաւ ի լուսաւորու-
թիւն ազգին Հայոց... վասն որոյ զամենայն
զբարութիւնս տեսեալ իմ ոչ խնայեցի զվըր-
տակրութիւնս. ուստի նախապէս հարկաւորե-
ցայ օրինակաց, զի իցէր յստակ և զատեալ
յամենայն սխալանաց. զորոս զիրն միակերպ
ունէի, և ի բազում տեղիս պակաս և թերի
երևէին, որովք ոչ կարէաք ձեռնամուխ լի-
նել գործոյս : Ուստի զոյր ի մեզ, այլ աս-
տուածահաճոյ և մեծահաւատ, բարեւէր և
բարի անուամբ համբաւեալ և առաքինու-
թեամբ զարդարեալ : Զոր և յորջորջիւր պա-
րոն Յակոբ որդի Պատմի և Թոն աղա խա-
լայ Աղափրիի յազգեն Զախարունեաց... » :

« Ուրեմն յիշել մաղթեմ զնոցանէ որ եւ
զեն օժանդակ և օգնական գործարանիս...
նախապէս յիշեալիք զարժանին բարի յիշման
զպարոն Մանուկն Յակոբլանեան հանգերձ
իւրայնօք, նաև զնախկին բարեկամն իմ և
հարազատ սիրելին, աղայ Մարութ Յովնէ-
փեան փնաչեանց, հանգերձ նորաբողոք ա-
ղայ Գրիգոր օրգեկաւ և ամենայն ընտանեօք :

Այլ և զմեծահաւատ և զգերապատիւ Զու-
ղայեցի պարոն Յարութիւն Կարապետեան,
խնամակալն իմ հանգերձ ազգականօք : Նաև
զպարոն Բարչամ Սարգիս Քալանթարեանն,
զնախկին սիրելի և ձեռնտուն, որ զննդա-
գիրն ետ փորագրել և շնորհեաց տպարանիս
յիշատակ : Էւ ևս զպարոն Յակոբ Միմօնեան
Այուրեանց, նախկին յարգարող գործարա-
նիս : Այլ և յիշեալիք զլուստակաւորս գոր-
ծարանիս նախապէս զհոգեծին զաւակն իմ
զձեռնաստուն աշակերտն, զԽաչիկ Մատուր
Զարիփեանն Նոր-Զուղայու Թաւրիզեցին...
զի ի սկզբանէ աշխատող է և օգնական իմ
և համայն գործարանիս, և մանաւանդ փո-
րազրութեան տառից, և ոչ եթէ միայն Հա-
յոց, այլ և այլազգաց և պարսից՝ զօր վասն
փորձառութեան յայտ արարաք ձերում բա-
նասիրութեան՝ պարսից լեզուով, զոր Բէիթ
ասեն, սակս գովութեան տարժանելի գործոյս
աշխատողաց, ի փառս տուողին շնորհաց » :

Հետեւեալ 1794 աւարին սկսաւ հրատա-
րակել Աղապար անունով լրագիրն, ամսօ-
րեայ հրատարակութիւն, որ շարունակեց մինչ
ի 1796. « Նկատելով, կ'ըսէ հրատարա-
կողն, եթէ զօժանդակութիւնն տպարանին,
և եթէ բարեպէս յառաջ եկեալն ուսումնա-
սիրաց, յարմար վարկայ նուիրել առաջի ձե-
րումք ազգասիրութեան զխոկմունս նարդնին,
այսինքն՝ տպեցմամբ ի լոյս ածել զտեսարակ
մի յամենայնում վերջնոց ամսոյ, անուանեալ
Ազգ արարօղ, յորմէ իմացումն լինելոց է
ընթերցողաց, ծայրաքաղ անցնն նոյնոյ ամ-
սոյ, եթէ ի զանազան կազեթաց, եթէ ի
զանազան քարտիսաց, և եթէ այլոց զանա-
զան գրոց. նաև բանք հարկաւորք և քաղց-
բալուրք. և ի վերջնում տեսարակս՝ զ'օրա-
ցոյց մի հետեւեալ ամսոյ, պարունակեալ ի
նմա զտօնս սրբոց, և զաւուրս ծննդեան և
լրման լուսնոյ » :

Այս նախընթաց հայերէն լրագիրն է, որոյ
բաղգաւոր հրատարակչին, մինչ անելի կարե-
ւորագոյն երկը և գործք մոռացութեան կը
արուին, ունեցաւ իւր վրայ հիացողքն և ին-
չուան հարկւրամեայ յորելիին արժանացաւ :

Շարայարեյի